Հավելված N 13
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ԸՆԴՀԱՆՈՒՐ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ, ՀԱՏՈՒԿ) ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ, ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ, ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՏԱԼՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ N _____ ____ _____ 20__ թ.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
ստուգող մարմնի գտնվելու վայրը հեռախոսը

☐☐☐☐ Անձնական կոդը	_____ պաշտոնը	_____ ազգանունը, անունը, հայրանունը
☐☐☐☐ Անձնական կոդը	_____ պաշտոնը	_____ ազգանունը, անունը, հայրանունը
☐☐☐☐ Անձնական կոդը	_____ պաշտոնը	_____ ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ _____ 20___ թ., ավարտը՝ _____ _____ 20___ թ.

_____
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_____ ՀՎՀՀ ☐☐☐☐☐☐☐☐
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի գտնվելու վայրը Հեռախոսը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝
_____
_____
_____
_____
_____
_____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ.հ.	Հարց	Պատասխան
1.	Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները	
2.	Իրականացվող կրթական ծրագրերը	
3.	Համապատասխան լիցենզիաների առկայությունը	
4.	Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	
5.	Սովորողների փաստացի թիվը ուսումնասիրության պահին	
6.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը	
7.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
8.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
9.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
10.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
11.	Տնօրենի տեղակալների թիվը (ըստ պաշտոնների նկարագրի)	
12.	Ուսուցիչների թիվը	
13.	Ատեստավորված ուսուցիչների թիվն ըստ տարիների	
14.	Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվն ըստ առարկաների	
15.	Հատուկ մանկավարժների (լոգոպեդ, տիֆլոմանկավարժ, սուրդոմանկավարժ, օլիգոֆրենամանկավարժ, ընդհանուր և մասնագիտացված ծրագրեր իրականացնող դպրոցներում՝ ուսուցչի օգնականներ) թիվը	
16.	Սոցիալական մանկավարժների թիվը	
17.	Հոգեբանների թիվը	
18.	Երկարօրյա խմբերի դաստիարակների թիվը	
19.	Լաբորանտների թիվը	
20.	Գրադարանավարների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից ՀՀ հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ) ծրագրեր իրականացնող կազմակերպությունում ուսուցչի ատեստավորմանը, ուսուցչի ատեստավորման տարածքային և հանրապետական հանձնաժողովների ձևավորմանը և գործունեությանը, ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալուն ներկայացվող պահանջների կատարմանն ուղղված ստուգումների

Հ/Հ	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին*	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1.	Տնօրենը յուրաքանչյուր տարվա համար օրենքով սահմանված կարգով կազմել է տվյալ տարվա ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և մինչև փետրվարի 1-ը ներկայացրել տարածքային կառավարման մարմնի ղեկավարին՝ մարզպետին, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետին, նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների դեպքում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարին	ՀՄՕ, 26-րդ հոդված, 6-րդ մաս, հավելված 2, 7-րդ կետ				0,4	փաստա-թղթային	
2.	Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ուսումնական հաստատության միջոցների հաշվին նախապես պարտադիր անցել է վերապատրաստում	ՀՄՕ, 26-րդ հոդված, 8-րդ մաս				0,4	փաստա-թղթային	
3.	Տնօրենը ատեստավորման ենթակա ուսուցչին ծանոթացրել է ատեստավորման հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի փաթեթի բովանդակությանը, տրամադրել է դրանց պատճենը և տեղեկացրել ատեստավորման ընդհանուր ընթացակարգի մասին մինչև ատեստավորման հանձնաժողով ներկայացնելը	ՀՄՕ, 26-րդ հոդված, 13-րդ մաս				0,3	փաստա-թղթային	
4.	Ատեստավորման ենթակա ուսուցչին տնօրենն ատեստավորումից ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր ծանուցել է փաստաթղթային ատեստավորման, կարգի և անցկացման ժամկետի մասին	ՀՄՕ, 26-րդ հոդված, 7-րդ մաս, հավելված 2, 8-րդ կետ				0,4	փաստա-թղթային	
5.	Ուսումնական հաստատությունը ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը ստանալու օրը դրա մասին տեղեկացրել է տվյալ ուսուցչին	ՀՄՕ, 26-րդ հոդված, 17-րդ մաս				0,3	փաստա-թղթային	
6.	Տնօրենը, հիմք ընդունելով ատեստավորման հանձնաժողովի ընդունած որոշումը, այն ստանալուն հաջորդող տասնօրյա ժամկետում պաշտոնից ազատել է զբաղեցրած պաշտոնին չհամապատասխանող ուսուցչին, եթե օրենքով սահմանված ժամկետում ատեստավորման հանձնաժողովի որոշումը չի բողոքարկվել	ՀՄՕ, 26-րդ հոդված, 20-րդ մաս				0,4	փաստա-թղթային	
7.	Ատեստավորման չի ներկայացվել 1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ուսուցիչը. 2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը (եթե նա նման հայտ չի ներկայացրել)	ՀՄՕ, 26-րդ հոդված, 24-րդ մաս				0,4	փաստա-թղթային	
8.	Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը ներկայացվել է ատեստավորման արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, (եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել):	ՀՄՕ, 26-րդ հոդված, 25-րդ մաս				0,3	փաստա-թղթային	

9.	Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը ներկայացվել է ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում	ՀՄՕ, 26-րդ հոդված, 26-րդ մաս				0,3	փաստա-թղթային	
10.	Որակավորման տարակարգ ստացած ուսուցչին տրվել է (տրվում է) համապատասխան հավելավճար ուսումնական հաստատությանը հատկացված միջոցների հաշվին՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով	ՀՄՕ, 26-րդ հոդված, 36-րդ մաս, հավելված 3, 14-րդ կետ				0,4	փաստա-թղթային	
11.	Տնօրենը յուրաքանչյուր տարվա համար կազմել և հաստատել է տվյալ տարվա հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների ցանկը և ներկայացրել է ատեստավորման հանձնաժողով՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով	ՀՄՕ, 26-րդ հոդված, 6-րդ մաս				0,3	փաստա-թղթային	
12.	Տնօրենը հաստատել է ուսումնական հաստատության ուսուցիչների հերթական ատեստավորման ժամանակացույցը	հավելված 2, 4-րդ կետ				0,3	փաստա-թղթային	

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

1.	«Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է	V		
2.	«Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում			V

Ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենք (**ՀՄՕ**)
2. ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի N 1745-Ն որոշումը <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման տարածքային, ինչպես նաև որակավորման տարակարգի շնորհման հանրապետական հանձնաժողովների ձևավորման և գործունեության, հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման և որակավորման տարակարգի շնորհման, ինչպես նաև ատեստավորման միջոցով որակավորում ստացած պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչներին հավելավճար տալու կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> (**հավելված** 2, **հավելված 3**)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ